«Ճամփորդիր հարմարավետ American Express® քարտի հետ» արշավի իրականացման պայմաններ

1. Ներածություն

1.1. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից թողարկված American Express Gold և American Express Gold Debit քարտերի (այսուհետ՝ Քարտ) քարտատերերի (այսուհետ՝ Քարտատեր) համար Կազմակերպչի կողմից իրականացվում է «Ճամփորդիր հարմարավետ American Express® քարտի հետ» քարտերի արշավ (այսուհետ՝ Արշավ):

1.2. Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները (այսուհետ՝ Պայմաններ):

1.3. Պայմաններին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.acba.am կայքում:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Արշավի 2.1. կետում նշված կայքում:

2.4 Արշավի իրականացման ժամանակահատված է համարվում՝ 2026թ. հուլիսի 24-ից մինչև 2026թ. սեպտեմբերի 24-ը ներառյալ:

3. Երաշխավորված պարգևատրում

3.1. Արշավի ժամանակահատվածում այն Քարտատերերին, ովքեր արշավի համար հայտարարած ժամանակահատվածում կպատվիրեն նոր հիմնական Քարտ, որպես Welcome պարգևատրում կստանան Bon Tour տեսակի ճամպրուկ (այսուհետ՝ Պարգևատրում):

3.2. Պարգևատրումը տրամադրվում է բացառապես նոր և 70,000 ՀՀ դրամ տարեկան սպասարկման միջնորդավճարով պատվիրվող Քարտերի Քարտատերերին:

3.3. Գործող Քարտը փակելու և նոր Քարտ պատվիրելու, Քարտը փոխարինելու կամ վերաթողարկելու դեպքերում Պարգևատրում չի տրամադրվում:

3.4. Պարգևատրումը տրամադրվում է արշավի համար հայտարարված ժամանակահատվածում Քարտը պատվիրելու և այն մինչև 2026թ. հոկտեմբերի 21-ը Կազմակերպչից վերցնելու դեպքում:

3.5 Քարտը, Կազմակերպչի կողմից ստանալուց հետո առավելագույնը 14 աշխատանքային օրվա ընթացքում, Բանկի կողմից Քարտատիրոջ՝ Բանկում գրանցված հիմնական էլեկտրոնային հասցեին կուղարկվի էլեկտրոնային հավաստագիր՝ Պարգևատրումը ստանալու համար:

3.6. Արշավի պայմաններում նշված Պարգևատրումը Քարտատերը կարող է ձեռք բերել Բանկի հետ համագործակցող SacVoyage խանութ-սրահից (հասցե՝ Հյուսիսային պողոտա 6/11) Արշավի պայմանների 3.5. կետում նշված էլեկտրոնային հավաստագիրը և անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու պարագայում:

3.7. Պարգևատրումը SacVoyage խանութ-սրահում տվյալ պահին առկա չլինելու պարագայում, Քարտատիրոջը լրացուցիչ կտեղեկացվի Պարգևատրման առկայության ժամկետի մասին:

3.8. Էլեկտրոնային հավաստագիրը ուժի մեջ է տրամդրման պահից 4 ամսվա ընթացքում:

3.9. Պայմաններում նշված Պարգևատրումը ենթակա չէ փոխարինման այլ ապրանքի, ծառայության կամ գումարի հետ:

3.10. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Արշավի շրջանակում տրամադրված Պարգևատրման որակի համար:

3.11. Բանկի կողմից զեղծարար և/կամ առերևույթ կեղծ և/կամ հաճախորդի գործարար բնութագրին չհամապատասխանող և/կամ տնտեսական նպատակը չհիմնավորվող գործարքների վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում Քարտատիրոջ մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել: Վերոնշյալ չափանիշները սահմանվում և որոշվում են բանկի կողմից:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.acba.am կայք կամ զանգահարել 010-31-88-88 հեռախոսահամարով:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: